

**«ԹՄԱՈՒԴԻՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**2011Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԳՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվություն	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	5
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	6

‘000 դրամ

	<i>Ծանոթ.</i>	<i>31/12/11</i>	<i>31/12/10</i>	<i>01/01/10</i>
Ակտիվ				
Հիմնական միջոցներ	4	97,686	110,784	125,770
Ոչ նյութական ակտիվներ	5	202	125	144
Ներդրում աստղիացված կազմակերպությունում	6	-	590	1,000
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		97,888	111,499	126,914
Պաշարներ	7	305	326	256
Կանխավճարներ ծառայությունների համար	8	551	5,294	163
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	9	19,274	4,381	3,244
Կանխավճարներ հարկերի և պարտ. վճար. գծով	10	590	2,785	800
Դրամական միջոցներ	11	2,797	4,853	2,913
Ժամկետային ավանդ	12	-	1,860	940
Այլ ընթացիկ ակտիվներ	13	382	47	29
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		23,899	19,546	8,345
Ընդամենը ակտիվներ		121,787	131,045	135,259
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական կապիտալ	14	5,000	5,000	5,000
Կուտակված շահույթ	15	27,157	25,724	251
Պահուստային կապիտալ	16	761	761	761
Ընդամենը սեփական կապիտալ		32,918	31,485	6,012
Վարկեր և փոխառություններ	17	65,382	56,800	76,353
Հետաձգված հարկային պարտավորություններ	18	1,385	1,432	1,231
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		66,767	58,232	77,584
Վարկեր և փոխառություններ	17	1,982	8,258	34,777
Առևտրական կրեդիտորական պարտքեր	19	2,048	80	44
Կանխավճարներ ծառայությունների համար	20	14,888	29,904	15,023
Շահութահարկի գծով պարտավորություն	21	2,103	2,576	1,819
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություն	22	1,081	510	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		22,102	41,328	51,663
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		121,787	131,045	135,259



Թ.Մովսիսյան
Գլխավոր տնօրեն

<i>‘000 դրամ</i>	Ծանոթ.	2011	2010
Հասույթ	23	181,582	206,671
Վաճառքի ինքնարժեք		(101,813)	(115,589)
Համախառն շահույթ		79,769	91,082
Վարչական ծախսեր		(28,287)	(27,378)
Այլ ծախսեր	24	(1,106)	(2,280)
Գործառնական գործունեությունից շահույթ		50,376	61,424
Ֆինանսական եկամուտ	25	82	26
Ֆինանսական ծախսեր	25	(7,714)	(8,702)
Փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)	25	768	(1,498)
Շահույթը մինչև հարկումը		43,512	51,250
Շահութահարկի գծով ծախս	26	(9,179)	(10,777)
Տարվա շահույթ		34,333	40,473
Չբաշխված շահույթ տարվա սկզբի դրությամբ		25,724	251
Շահարաժին	15	(32,900)	(15,000)
Չբաշխված շահույթ տարվա վերջի դրությամբ		27,157	25,724



Թ.Մովսիսյան
Գլխավոր տնօրեն

*«ԹՄ Առողիտ» փակ բաժնետիրական ընկերություն
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*

<i>‘000 դրամ</i>	Ծանոթ.	2011	2010
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Տարվա շահույթ		34,333	40,473
<i>Ոչ դրամական եկամտի և ծախսի ճշգրտումներ</i>			
Ֆինանսական ծախսեր	25	7,714	8,702
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	21,26	(47)	201
Մաշվածություն, ամորտիզացիա	4,5	15,117	18,984
Այլ ճշգրտումներ		674	(26)
<i>Փոփոխություններ գործառնական ակտիվներում և պարտավորություններում</i>			
Առևտրական և այլ դեբիտորական պարտքերից		(7,955)	(8,253)
Պաշարներից		21	(70)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերից		(13,116)	16,184
Այլ ընթացիկ ակտիվների և պարտավորություններից		(335)	(18)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր		36,406	76,177
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումից			
		(2,096)	(3,979)
Ժամկետային ավանդի ներդրումից		2,210	930
Ժամկետային ավանդի մարումից		(350)	36
Տոկոսային եկամտից		82	(1,860)
Ասոցիացված կազմ. ներդրման մարումից			410
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր		(154)	(4,463)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Ստացված վարկերից և փոխառություններից		18,965	11,900
Ստացված վարկերից և փոխառությունների մարումից		(15,458)	(48,806)
Տոկոսային ծախսերից		(8,915)	(17,868)
Շահաբաժնի վճարումից		(32,900)	(15,000)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր		(38,308)	(69,774)
Դրամական միջոցների զուտ աճ (նվազում)		(2,056)	1,940
Դրամական միջոցներ տարվա սկզբի դրությամբ		4,853	2,913
Դրամական միջոցներ տարվա վերջի դրությամբ		2,797	4,853



Թ.Մովսիսյան
Գլխավոր տնօրեն

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ընկերության նկարագիրը և գործունեությունը

«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) աուդիտորական, խորհրդատվական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1997թ.: Նույն տարում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից տրվել է աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա:

Ընկերությունը չունի դուստր կազմակերպությունի: Ընկերության ասոցիացված կազմակերպությունն էր հանդիսանում «Հայաստանի խորհրդատուների կոլեգիա» ՓԲԸ-ն, որը ստեղծվել էր 2009թ. և լուծարվել էր 2011թ-ին (ծանոթ 6):

Ընկերության գործունեության հիմնական տեսակները՝

- աուդիտորական ծառայություն,
- հաշվապահության վարում,
- հաշվապահական և հարկային խորհրդատվություն,
- ուսուցում:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2011թ. 15 անձ է և 2010թ.՝ 20:

Ընկերության հասցեն է՝ ք.Երևան, Տերյան 105/1:

1.2. Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրվել են խորհուրդ և վերստուգիչ: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

2. Պատրաստման հիմունքները

2.1. Համապատասխանությունը ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՓՄԿ-ների ՖՀՄՄ) համապատասխան:

2.2. Անցումը ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին

Կազմակերպության՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով առաջին ֆինանսական հաշվետվությունները տարեկան այն առաջին ֆինանսական հաշվետվություններն են, որոնցում կազմակերպությունը որդեգրում է ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ն՝ այդ հաշվետվություններում կատարելով ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին համապատասխանության վերաբերյալ բացահայտ և անվերապահ հայտարարություն: Սույն ֆինանսական հաշվետվությունները Ընկերության՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով առաջին ֆինանսական հաշվետվություններն են: Ընկերությունը ներկայացրել է իր նախորդող ամենավերջին ֆինանսական հաշվետվությունները ՀՀՀՀՄ-ների համաձայն: ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին անցնելու ամսաթիվը, այսինքն ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ի համաձայն Ընկերության վարվող հաշվապահական հաշվառման սկզբնակետը, 2010թ. հունվարի 1-ն է:

Ընկերությունը կիրառել է հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը իր ֆինանսական վիճակի մասին՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով սկզբնական հաշվետվության մեջ և ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով իր առաջին ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում: Հաշվապահական հաշվառման այդ քաղաքականությունը, որի վերաբերյալ էական տեղեկատվությունը բացահայտվել է 3-րդ ծանոթագրությունում, համապատասխանում է 31.12.2011թ. դրությամբ գործող ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ին:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին երեք հաշվետվություն, համապարփակ ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների երկու հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին երկու հաշվետվություն, դրանց առնչվող ծանոթագրությունները, ներառյալ համադրելի տեղեկատվությունը: ՀՀՀՀՄ-ներից ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ներին անցումը չի ազդել ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա:

2.3. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.4. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.5. Գատաղությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառումը

ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են բողոմում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր

3.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը

Ընկերությունը կիրառել է հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը իր ֆինանսական վիճակի մասին՝ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով սկզբնական հաշվետվության մեջ և ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով ներկայացված իր առաջին (սույն) ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում:

3.2. Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ:

բ) համապարփակ ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթների մասին հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանի համար: Տարվա ընթացքում սեփական կապիտալի փոփոխությունները առաջացել են միայն շահույթից (վնասից) ու շահաբաժինների վճարումից: Ընկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառնության վրա հիմնված դասակարգումը:

գ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ հաշվետու ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես ֆինանսավորման, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ժամանակաշրջանի (հաշվետու տարվա) ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս առևտրային զեղչերը և արտոնությունները հանվում են:

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվների սկզբնական արժեքը (ինքնարժեքը)՝ հանած մնացորդային արժեքը, դրանց գնահատված օգտակար ծառայության ընթացքում բաշխելու միջոցով՝ կիրառելով գծային մեթոդը: Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման համար կիրառվում են հետևյալ տարեկան դրույքաչափերը՝ շենքեր՝ 2տոկոս, մեքենաներ-սարքավորումներ՝ 20տոկոս,

տրանսպորտային միջոցներ՝ 10տոկոս, արտադրատնտեսական գույք՝ 20տոկոս, փոքրարժեք (մինչև 50 հազար դրամ արժողությամբ) հիմնական միջոցներ՝ 100 տոկոս, այլ հիմնական միջոցներ՝ 20տոկոս: Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել մաշվածության հաշվարկման դրույքաչափերի, ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա այդ ակտիվի մաշվածությունը վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Հիմնական միջոցնի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապահանջվի, երբ այն օտարվում է, կամ ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

3.3. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են ձեռքբերված համակարգչային ծրագրերը և լիցենզիան, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամրտիզացիան և կուտակված արժեքը կումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց գնահատված օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը: Մնացորդային արժեքը գնահատվել է զրո: Համակարգչային ծրագրերի օգտակար ծառայությունը երեք տարի է, իսկ լիցենզիայինը՝ լիցենզիայի գործողության ժամկետը: Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույքաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

3.4 Ներդրում ասոցիացված կազմակերպությունում

Ասոցիացված կազմակերպությունում ներդրումը հաշվառվում է ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեքը կումից կորուստները:

3.5. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և վաճառքի գնից՝ հանած համարման և վաճառքի ծախսումները, նվազագույնով: Ինքնարժեքը հաշվարկվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) մեթոդը:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Ընկերությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են: Պաշարների վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները: Այն ներառում է նաև պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու (վերամշակելու) ընթացքում:

3.6. Արժեքը կում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները և ասոցիացված կազմակերպությունում ներդրումը վերլուծվում են՝ որոշելու համար արդյոք առկա է որևէ հայտանիշ, որ այդ ակտիվներն ունեցել են արժեքը կումից կորուստ: Եթե կա հնարավոր արժեքը կման որևէ հայտանիշ, ապա ցանկացած ազդեցության ենթարկված ակտիվի (կամ համապատասխան ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարը գնահատվում է և համեմատվում դրա հաշվեկշռային արժեքի հետ: Եթե ակտիվի գնահատված փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա գնահատված փոխհատուցվող գումարը և արժեքը կումից կորուստն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեքը կման լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ համանման հոդվածների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համարման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ համանման հոդվածների խումբը) արժեքը կվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համարման և վաճառքի ծախսումները, իսկ արժեքը կումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ կապակցված ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կապակցված ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

3.7 Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Հիմնական վաճառքները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով, և դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն: Երբ պարտքը հետաձգվում է վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները վերլուծվում են՝ որոշելու համար, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ գումարները փոխհատուցելի չեն: Եթե գումարները փոխհատուցելի չեն, արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված առևտրական դեբիտորական պարտքերը վերահաշվարկվում են դրամով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Արտարժույթի փոխարժեքային օգուտները կամ վնասները ներառվում են այլ եկամտում կամ այլ ծախսերում:

3.8 Առևտրական կրեդիտորական պարտքեր

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական պայմանների հիմունքով պարտականություններ են և տոկոսակիր չեն:

3.9 Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքները՝

- ժամկետային ավանդներ,
- ստացված վարկեր և փոխառություններ:

Ամորտիզացված արժեքը չափվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, երբ տեղին է, ավելի կարճ ժամանակաշրջանի համար, գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն գեղջում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ հաշվեկշռային արժեքի հիման վրա: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքը ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ գեղջված արդյունավետ տոկոսադրույքով.

բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ վաղաժամկետ վճարման, գնման կամ համանման օպցիոններ) և այն հայտնի պարտքային կորուստները, որոնք Ընկերությունը կրել է, սակայն այն չպետք է հաշվի առնի դեռևս չկրած ապագա պարտքային հնարավոր կորուստները:

3.10. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Պայմանագրի աշխատանքների ավարտվածության աստիճանը որոշվում է պայմանագրի աշխատանքների ուսումնասիրությամբ:

Երբ պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատորեն գնահատվել, ապա Ընկերությունը ճանաչում է հասույթը միայն պայմանագրի փաստացի կրած այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն և ծախսումները որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:

Ապրանքների (արտադրանքի) վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ ապրանքները առաքվում են և սեփականության իրավունքը փոխանցվում է:

3.11. Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության տրված (ստացված) ակտիվները ճանաչվում են վարձատուի հաշվեկշռում:

Որպես վարձակալ, Ընկերությունը գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս կամ ծախսում գծային հիմունքով, եթե մեկ այլ սխտեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

3.12. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Ընկերությունը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.13. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Ջեդջման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Ջեդջման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների սպազա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.14. Փոխառության ծախսումներ

Բոլոր փոխառության ծախսումները ճանաչվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում դրանք կատարվել են:

3.15. Ֆունկցիոնալ արժույթ

Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս Ընկերությունը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթը՝

-որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են). և

-այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

3.16. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

	<i>31.12.2011</i>	<i>31.12.2010</i>	<i>01.01.2009</i>
	<i>ՀՀ դրամ</i>	<i>ՀՀ դրամ</i>	<i>ՀՀ դրամ</i>
1 ԱՄՆ դոլար	385.77	363.44	377.89
1 Եվրո	498.72	481.16	542.23

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ՝

- Դրամային հոդվածի հետ կապված փոխարժեքային տարբերությունները, որոնք կազմում են արտերկրյա ստորաբաժանումում հաշվետու կազմակերպության կատարած գուտ ներդրման մի մասը,

կոնկրետ իրավիճակից ելնելով, ճանաչվում են Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվություններին կամ արտերկրյա ստորաբաժանման անհատական ֆինանսական հաշվետվություններին շահույթում կամ վնասում: Համախմբված ֆինանսական հաշվետվություններում, երբ արտերկրյա ստորաբաժանումը դուստր կազմակերպություն է, այդպիսի փոխարժեքային տարբերությունները սկզբնապես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և սեփական կապիտալից վերադասակարգվում են որպես զուտ ներդրման օտարումից շահույթ կամ վնաս:

3.17 Ծահութահարկ

Ծահութահարկի գծով ծախսը ներկայացնում է վճարման ենթակա ընթացիկ հարկի և հետաձգված հարկի հանրագումարը:

Վճարման ենթակա ընթացիկ հարկը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկը ճանաչվում է ակտիվների և պարտավորությունների ֆինանսական հաշվետվություններում ճանաչված հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև տարբերությունների գծով (ժամանակավոր տարբերություններ): Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք ակնկալվում է, որ ապագայում կավելացնեն հարկվող շահույթը: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք ակնկալվում է, որ ապագայում կնվազեցնեն հարկվող շահույթը, ինչպես նաև՝ ցանկացած չօգտագործված հարկային կորուստների կամ չօգտագործված հարկային զեղչերի գծով: Հետաձգված հարկային ակտիվները չափվում են ամենաբարձր գումարով, որը, ընթացիկ կամ գնահատված ապագա հարկվող շահույթի հիման վրա, ավելի շատ հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի:

Հետաձգված հարկային ակտիվների զուտ հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշգրտվում է ապագա հարկվող շահույթների ընթացիկ գնահատականն արտացոլելու նպատակով: Ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հետաձգված հարկը հաշվարկվում է հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում են, որ կկիրառվեն այն ժամանակաշրջանների հարկվող շահույթի (հարկային վնասի) նկատմամբ, որոնց ընթացքում ակնկալվում է, որ հետաձգված հարկային ակտիվը կիրացվի կամ հետաձգված հարկային պարտավորությունը կմարվի կիրառելով այն հարկային դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջին:

3.18. Մխալներ

Ընկերությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց, բացառությամբ երբ անիրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

3.19. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

3.20. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Ընկերությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է որևէ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Ընկերությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետ-ընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Մովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին:

Երբ Ընկերության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Ընկերությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Ընկերությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

3.21. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Ընկերությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Եթե շահաբաժինները առաջադրվում կամ հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, Ընկերությունը չի ճանաչում այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

4. Հիմնական միջոցներ

<i>‘000 դրամ</i>	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք (ինքնարժեք)					
31 դեկտեմբեր 2010թ.	80,905	18,154	15,779	21,555	136,393
Չեռք բերում				1,727	1,727
Դուրս գրում		-3,095		-3,159	-6,254
31 դեկտեմբեր 2011թ.	80,905	15,059	15,779	20,123	131,866
Կուտակված մաշվածություն					
31 դեկտեմբեր 2010թ.	6,363	4,702	7,232	7,311	25,608
Տարեկան մաշվածություն	4,047	4,667	1,577	4,535	14,826
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված մաշվածություն		-3,095		-3,159	-6,254
31 դեկտեմբեր 2011թ.	10,410	6,274	8,809	8,687	34,180
Հաշվեկշռային արժեք					
31 դեկտեմբեր 2010թ.	74,542	13,452	8,547	14,243	110,784
31 դեկտեմբեր 2011թ.	70,495	8,785	6,970	11,436	97,686

Մաշվածություն

<i>‘000 դրամ</i>	2011	2010
Ընդամենը, այդ թվում՝	14,826	18,716
<input type="checkbox"/> արտադրական նշանակության (վաճառքի ինքնարժեք)	12,602	15,909
<input type="checkbox"/> վարչական նշանակության (վարչական ծախսեր)	2,224	2,807

Գրավադրում

Բանկի հետ կնքված վարկային պայմանագրերի շրջանակներում գրավադրված է Ընկերության գրասենյակային տարածքը (ծանոթ. 17): Հաշվեկշռային արժեքը 31/12/2011թ. կազմել է 70,495 հազար դրամ: Հիմնական միջոցների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ չկան:

Այլ

Հիմնական միջոցների ձեռք բերման պայմանագրային պարտավորություններ չկան:

5. Ոչ նյութական ակտիվներ

<i>‘000 դրամ</i>	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիա	Ընդամենը
Սկզբնական արժեք (ինքնարժեք)			
31 դեկտեմբեր 2010թ.	155	250	405
Ավելացում	118	250	368
Դուրս գրում	-	(250)	(250)
31 դեկտեմբեր 2011թ.	273	250	523
Կուտակված ամորտիզացիա			
31 դեկտեմբեր 2010թ.	134	146	280
Տարեկան ամորտիզացիա	41	250	291
Դուրս գրված ակտիվների գծով կուտակված ամորտիզացիա	-	(250)	(250)
31 դեկտեմբեր 2011թ.	175	146	321

Հաշվեկշռային արժեք			
31 դեկտեմբեր 2010թ.	21	104	125
31 դեկտեմբեր 2011թ.	98	104	202

1997թ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից Ընկերությանը տրվել է աուդիտորական գործունեության իրականացման լիցենզիա: Լիցենզիան անժամկետ է: Յուրաքանչյուր տարվա համար վճարվում է պետական տուրք 250 հազար դրամ:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ներառված է Համապարփակ ֆինանսական արդյունքների և չբաշխված շահույթի մասին հաշվետվության «Վաճառքի ինքնարժեք» հոդվածում:

Ոչ նյութական ակտիվների սեփականության իրավունքի սահմանափակումներ և ձեռք բերման պայմանագրային պարտավորություններ չկան:

6. Ներդրում ասոցիացված կազմակերպությունում

Ընկերության ասոցիացված կազմակերպությունն էր հանդիսանում «Հայաստանի խորհրդատուների կոլեգիա» ՓԲԸ-ն (ՀԽԿ), որը ստեղծվել էր 2009թ. և լուծարվել 2011թ-ին: ՀԽԿ-ի կանոնադրական կապիտալը 5,000 հազար դրամ էր: Ընկերությանն պատկանում էր ՀԽԿ-ի բաժնետոմսերի 20 տոկոսը: ՀԽԿ-ն լուծարվեց գործունեություն չիրականացնելու պատճառով: Լուծարումից Ընկերության վնասը կազմել է 590 հազար դրամ:

7. Պաշարներ

‘000 դրամ

	<i>Մնացորդ 31.12.2010թ</i>	<i>Ավելացում</i>	<i>Նվազեցում</i>	<i>Մնացորդ 31.12.2011թ</i>
Ընդամենը, այդ թվում՝	326	5,063	5,084	305
<input type="checkbox"/> նյութ	60	5,063	5,084	39
<input type="checkbox"/> գիրք	266			266

Որպես ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 5,084 հազար դրամ: Որպես պարտավորությունների երաշխիք գրավադրված պաշարներ չկան:

8. Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար

‘000 դրամ

	<i>Մնացորդ 31.12.2011թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2010թ.</i>
Ընդամենը, այդ թվում՝	551	5,294
<input type="checkbox"/> կապակցված կողմերի գծով (ծանոթ. 27)	-	5,000

9. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

‘000 դրամ

	<i>Մնացորդ 31.12.2011թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2010թ.</i>
Ընդամենը, այդ թվում՝	19,274	4,381
<input type="checkbox"/> մատուցված ծառայություններից	18,754	4,283

10. Կանխավճարներ հարկերի և պարտադիր վճարների գծով

<i>‘000 դրամ</i>	<i>Մնացորդ 31.12.2011թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2010թ.</i>
Ընդամենը, այդ թվում՝	590	2,785
<input type="checkbox"/> ԱԱՀ	586	2,611
<input type="checkbox"/> եկամտահարկ		163

11. Դրամական միջոցներ

<i>‘000 դրամ</i>	<i>Մնացորդ 31.12.2011թ.</i>	<i>Մնացորդ 31.12.2010թ.</i>
Ընդամենը, այդ թվում՝	2,797	4,853
Դրամարկդ	11	
Հաշվարկային հաշիվ	2,783	4,840
Արտարժույթային հաշիվ	3	13

12. Ժամկետային ավանդ

<i>‘000 դրամ</i>	<i>Մնացորդ 31.12.2010թ</i>	<i>Ավելացում</i>	<i>Նվազեցում</i>	<i>Մնացորդ 31.12.2011թ</i>
Ընդամենը	1,860	-	1,860	-

Ներդրվել է ժամկետային ավանդ HSBC բանկ Հայաստան ՓԲԸ-ում՝ 1,860 հազար դրամ գումարով, 7 ամիս տևողությամբ: Արդյունավետ տարեկան տոկոսադրույքը 6 տոկոս է: Տոկոսային եկամուտները կազմել է 82 հազար դրամ:

Ժամկետային ավանդը հանդիսացել է որպես Բանկի կողմից տրամադրված երաշխիքի ապահովություն՝ Ընկերության կողմից մատուցվելիք աուդիտորական ծառայությունների գծով: Երաշխիքի ժամկետը նույնպես 7 ամիս էր:

13. Այլ ընթացիկ ակտիվներ

Այս հոդվածում ներկայացված է հաշվանցման ենթակա հետաձգված ԱԱՀ-ի գումարը:

14. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 5 հատ սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1,000,000 դրամ: Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են և վճարված:
Հաշվետու տարում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

15. Կուտակված շահույթ

Ընկերությունն իրավունք ունի տարեկան մեկ անգամ իրականացնել իր շահույթի բաշխում բաժնետերերի միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից:

Բաշխման ենթակա շահույթը բաշխվում է ընկերության բաժնետերերի միջև՝ ըստ ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:

2011թ-ին հայտարարվել և վճարվել է 32,900 հազար դրամ և 2010թ-ին՝ 15,000 հազար դրամ շահաբաժին:

16. Պահուստային կապիտալ

Ընկերությունը, կանոնադրությամբ սահմանված կարգով, ստեղծել է պահուստային կապիտալ, որը կազմում է 761 հազար դրամ:

Պահուստային կապիտալի ծախսման կարգը որոշվում է բաժնետերերի ժողովի կողմից:

17. Վարկեր և փոխառություններ

Մարման ամսաթիվ	Արժույթ	Տոկոսադրույթ	Պարտավորություն	Այդ թվում՝	
			31.12.2011թ /‘000 դրամ Դրամ/	Կարճաժամկետ	Երկարաժամկետ
31/12/2013	դրամ	18%	65,382		65,382
այդ թվում՝ կապ. կողմերի գծով (ծանոթ.27)			52,808		52,808
05/06/2012	ԱՄՆ դոլար	12%	1,982	1,982	

Հաշվետու տարում տոկոսային ծախսերը կազմել են 7,714 հազար դրամ: Ֆինանսական պարտավորությունների գծով չկան պայմանների խախտումներ կամ հիմնական գումարի, տոկոսների չվճարումներ, կամ մարման ժամկետների խախտումներ:

Գրավադրումների և սահմանափակումների վերաբերյալ տես ծանոթագրություն 4:

18. Հետաձգված հարկային պարտավորություններ

‘000 դրամ	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հարկվող ժամանակվոր տարբերություն
Հիմնական միջոցներ	97,888	92,963	4,925
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	19,274	17,274	2,000
Ընդամենը			6,925
Հարկի դրույքը			20%
Հետաձգված հարկային պարտավորություն			1,385

«Հիմնական միջոցներ» հոդվածում հարկվող ժամանակավոր տարբերությունը առաջացել է հիմնական միջոցի միավորի՝ ֆինանսական ու հարկային հաշվառման նպատակներով տարբեր օգտակար ծառայության ժամկետների կիրառումից: «Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր» հոդվածում հարկվող ժամանակավոր տարբերությունը առաջացել է ֆինանսական ու հարկային հաշվառման նպատակներով դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (անհավաքագրելիություն) տարբեր գնահատումներից (կարգավորումներից):

Չկան որևէ նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերություններ, չօգտագործված հարկային վնասներ և չօգտագործված հարկային զեղչեր, որոնց համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չի ճանաչվել որևէ հետաձգված հարկային ակտիվ:

19. Առևտրական կրեդիտորական պարտքեր

<i>‘000 դրամ</i>	Մնացորդ 31.12.2011թ	Մնացորդ 31.12.2010թ
Ընդամենը, այդ թվում`	2,048	80
<input type="checkbox"/> կապակցված կողմերի գծով (ծանոթ.27)	1,900	-

20. Կանխավճարներ ծառայությունների համար

Այս հոդվածում ներկայացված են աուդիտորական ծառայությունների համար ստացված կանխավճարները, որոնց դիմաց դեռևս ծառայություններ չեն մատուցվել:

21. Ծահուրահարկի գծով պարտավորություն

<i>‘000 դրամ</i>							
<i>Մնացորդ 01.01.2010թ.</i>	<i>Հաշվեգրում</i>	<i>Վճարում</i>	<i>Մնացորդ 31.12.2010թ.</i>	<i>Հաշվեգրում</i>	<i>Վճարում</i>	<i>Մնացորդ 31.12.2011թ.</i>	
1,819	10,577	9,820	2,576	9,227	9,700	2,103	

22. Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություն

<i>‘000 դրամ</i>	Մնացորդ 31.12.2011թ	Մնացորդ 31.12.2010թ
Ընդամենը, այդ թվում`	1,081	510
<input type="checkbox"/> եկամտահարկ	673	-
<input type="checkbox"/> այլ	492	510

23. Հասույթ

<i>‘000 դրամ</i>	2011	2010
Ընդամենը, այդ թվում`	181,582	206,671
<input type="checkbox"/> ծառայությունների մատուցումից	181,582	206,511
o աուդիտորական ծառայություններից	121,063	98,894
<input type="checkbox"/> արտադրանքի վաճառքից	-	160

Հաշվետու տարեվերջի դրությամբ ընթացքի մեջ գտնվող ծառայությունների ավարտվածության աստիճանով որոշված հասույթը կազմել է 2,460 հազար դրամ:

24. Այլ ծախսեր

<i>‘000 դրամ</i>	2011	2010
Ընդամենը, այդ թվում`	(1,106)	(2,280)
<input type="checkbox"/> դեբիտորական պարտքերի դուրս գրումից	-	(2,000)
<input type="checkbox"/> ասոց. կազմակերպության լուծարումից	(590)	-
<input type="checkbox"/> անհատույց տրված ակտիվներից	(410)	(320)

25. Ֆինանսական եկամուտ և ծախս

<i>‘000 դրամ</i>	2011	2010
Ընդամենը, այդ թվում՝	(6,864)	(10,174)
<input type="checkbox"/> ֆինանսական եկամուտ	82	26
<input type="checkbox"/> ֆինանսական ծախս	(7,714)	(8,702)
<input type="checkbox"/> փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)	768	(1,498)

Ֆինանսական եկամուտը ժամկետային ավանդների գծով է (ծանոթ 12): Ֆինանսական ծախսը վարկերի և փոխառությունների գծով է (ծանոթ 17): Փոխարժեքային տարբերություններից օգուտը (վնասը) առաջացել է հիմնականում ներգրավված արտարժույթով վարկերից (ծանոթ 17):

26. Ծահուքահարկի գծով ծախս

<i>‘000 դրամ</i>	2011	2010
Ընդամենը, այդ թվում՝	(9,179)	(10,777)
<input type="checkbox"/> ընթացիկ հարկի գծով ծախս	(9,226)	(10,576)
<input type="checkbox"/> հետաձգված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	47	(201)

Ընթացիկ հարկի գծով սեփական կապիտալին դեբետագրված կամ կրեդիտագրված հոդվածներ չկան:

Չկան հարկի գծով ծախս (փոխհատուցում), որը վերաբերում է հաշվետու տարում ճանաչված արտասովոր հոդվածներին:

<i>‘000 դրամ</i>	2011	2010
Հարկի գործող միջին դրույքի և հարկի կիրառվող դրույքի թվային համադրում		
Հարկի կիրառվող դրույք	20%	20%
Ծահույթը մինչև հարկումը	43,512	51,250
Չնվազեցվող ծախսեր/չհարկվող եկամուտներ	2,618	1,630
Հարկվող շահույթը	46,130	52,880
Հարկ	9,226	10,576
Հարկի գործող միջին դրույքը	21.2%	20.6%

27. Կապակցված կողմերի բացահայտում

Ընկերության կապակցված կողմերը, որոնց գծով ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն պետք է կատարվեն բացահայտումներ՝

- Թաթուլ Մովսիսյան՝ Ընկերության բաժնետեր (80 տոկոս) և գլխավոր տնօրեն,
- «Թամազ» ՓԲԸ՝ 100 տոկոս բաժնետերեր են հանդիսանում Ընկերության 100 տոկոս բաժնետերերը՝ Թաթուլ Մովսիսյանը (80 տոկոս) և Սոֆյա Գրիգորյանը (20 տոկոս),
- «Հայաստանի խորհրդատուների կոլեգիա» ՓԲԸ՝ Ընկերությանն էր պատկանում բաժնետոմսերի 20 տոկոսը,
- հանգուցային կառավարչական անձնակազմ:

**«ԹՄ Առողիտ» փակ բաժնետիրական ընկերություն
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

‘000 դրամ

Հոդված	Ծանոթ.	Մնացորդ 31.12.2010թ	Ավելացում	Նվազեցում	Մնացորդ 31.12.2011թ
ստացված խորհրդատվական ծառայությունների գծով պարտավորություն ներդրում ասոցիացված կազմակերպությունում	8,19	(5,000)	16,620	9,720	1,900
ստացված փոխառություն	6	590	-	590	-
ստացված փոխառություն	17	40,843	18,965	7,000	52,808
փոխառության գծով տոկոսային ծախս	17	1,200	6,497	7,697	-

Կապակցված կողմերի միջև իրականացված գործարքները «անկախ կողմերի միջև գործարքներ» են: Պայմանագրային պարտավորությունների խախտումներ տեղի չեն ունեցել:

Հանգուցային կառավարչական անձնակազմին հաշվարկված աշխատավարձը կազմել է 17,271 հազար դրամ` 2011թ. և 16,064 հազար դրամ` 2010թ:

28. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար 2012թ. մարտի 7-ին` գլխավոր տնօրեն Թաթուլ Մովսիսյանի կողմից:



Թ.Մովսիսյան
Գլխավոր տնօրեն